



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 24 » հուլիսի 2017 թվական N: 251-Վ ք.Գյումրի

«ՍԱՄԱՐԻԹԵՐ ՎԵՐԱԿԱՆՉՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի
N 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «ը» ենթակետերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 573-Ա որոշման 3-րդ կետի պահանջի.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 105.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 65.883.600 Հայաստանի Հանրապետության դրամով՝ 9 հասարակ (սովորական) բաժնետոմսի հետգնման և մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումից հետո կկազմի 39.116.400 Հայաստանի Հանրապետության դրամ՝ մեկ հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 39,116.400 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի ապրիլի 3-ի «Գյումրու «Սամարիթեր» հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վերանվանելու մասին» N 80-Ա որոշմամբ հաստատված «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 19-րդ կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վալիկո Ներգաձեին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Հ.Արշակյանին:



Իսկականի հետ ճիշտ է

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2017 թվականի հուլիսի 24 -ի N 251 -Ա որոշման

<<ՍԱՄԱՐԻԹԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Կանոնադրության 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

19. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 39,116.400 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է մեկ հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 39,116.400 Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընկերության կողմից թողարկված մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը տեղաբաշխված է և սեփականության իրավունքով պատկանում է հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված է նրա կողմից:

Ընկերության բաժնետոմսը հասարակ սովորական է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵԿԱՎԱՐ



Խ.ՊՈՂՈՍՅԱՆ